«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 1

18 հունիսի 2019 թվականի

«Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները»** հարցը (զեկուցող՝ արտաքին կապերի դեպարտամենտի միջազգային կապերի բաժնի պետ Վ.Ա.Ղուկասյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային գործունեությունն իրականացվել է բուհի 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն: Միջազգային գործունեության հիմնական ցուցիչներն են.

1) ուսանողների փոխանակում,
2) դասախոսների փոխանակում,
3) օտար լեզվով դասավանդվող մասնագիտությունների թիվ,
4) օտարերկրյա ուսանողների թիվ,
5) դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն:

Համալսարանում իրականացվող ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակումները հիմնականում կատարվում են Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակներում, որոնց կազմակերպումը համակարգում է միջազգային կապերի բաժինը:

Ուսանողների փոխանակում

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր են գործուղվել 25 ուսանողներ (14 բակալավրիատի ուսանող, 11 մագիստրատուրայի ուսանող): Ըստ ֆակուլտետների՝ ուսանողների բաշխվածությունը եղել է. ֆինանսական ֆակուլտետ՝ 9 ուսանող, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ՝ 3 ուսանող, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ՝ 2 ուսանող, կառավարման ֆակուլտետ՝ 5 ուսանող, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ՝ 4 ուսանող, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ՝ 2 ուսանող:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մեկ կիսամյակ ժամանակահատվածով Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակներում հյուրընկալվել է 2 ուսանող՝ Վառնայի տնտեսագիտական (Բուլղարիա) և Սուջավայի Ստեֆան Չել Մարե (Ռումինիա) համալսարաններից:

2018-2019 թվականին Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարանի հետ միջբուհական համագործակցության շրջանակում ՀՊՏՀ 2 ուսանող հրավիրվել է մասնակցելու համալսարանի կողմից կազմակերպված երկշաբաթյա ամառային դպրոցին:

Դասախոսների փոխանակում

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր են գործուղվել 19 դասախոսներ և վարչական աշխատակիցներ, այդ թվում՝ 1 դասախոս Եղեգնաձորի և 2 վարչական աշխատակից Գյումրու մասնաճյուղերից: Բուհի թողարկող ամբիոններից ծրագրին մասնակցել է 10 ամբիոն: Ըստ ամբիոնների՝ բաշխվածության դասախոսների ամենամեծ մասնակցությունը եղել է. միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն՝ 4 դասախոս, աշխատանքի տնտեսագիտության ամբիոն՝ 3 դասախոս, կառավարման, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոններ՝ 2-ական դասախոս: Տնտեսագիտության տեսության, բանկային գործի և ապահովագրության, վիճակագրության, կառավարչական հաշվառման և աուդիտի մասնագիտական ամբիոնների որևէ դասախոս որևէ ծրագրի չի մասնակցել:

Մինչև 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը պլանավորված է իրականացնել 4 դասախոսի փոխանակում ընթացիկ ծրագրերի շրջանակում: 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակում ՀՊՏՀ-ից համագործակցության առաջարկ է ուղարկվել 88 գործընկեր բուհերի: Ծրագրերի արդյունքները հասանելի կլինեն 2019 թվականի օգոստոսին:

Վարչական աշխատակիցների փոխանակում

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր են գործուղվել 24 վարչական աշխատակիցներ:

Մինչև 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը պլանավորված է իրականացնել 3 վարչական աշխատակցի փոխանակում ընթացիկ ծրագրերով, սակայն դրանց թիվը կաճի՝ պայմանավորված նոր դիմած ծրագրերի ֆինանսավորմամբ:

ՀՊՏՀ-ում 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակներում կազմակերպվել է մեկշաբաթյա

վերապատրաստման շաբաթ: Այս միջոցառումը համալսարանի կողմից կազմակերպվում է արդեն 2-րդ անգամ: Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՊՏՀ-ն այս պահին միակ բուհն է Հայաստանում, որը կազմակերպում է միջազգային վերապատրաստման շաբաթ գործընկեր բուհերի դասախոսների և վարչական աշատակիցների համար: Նշված միջոցառմանը գործընկեր բուհերից ընթացիկ տարում մասնակցել են 10 վարչական աշխատակիցներ և դասախոսներ: ՀՊՏՀ միջազգային կապերի բաժինն իրականացրել է հարցումների վերլուծություն, որը նախորդ տարվա արդյունքների համեմատությամբ, բոլոր ուղղություններով առավելագույն գնահատական է ստացել: Իրականացվել են քանակական և որակական վերլուծություններ: Կատարվել է նաև 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված նմանատիպ միջոցառման և ընթացիկ տարվա արդյունքների համեմատություն: 2018-2019 թթ. վերապատրաստումների շաբաթվա արդյունքները բովանդակային առումով նույնն են: Կազմակերպական մասի վերաբերյալ գնահատման արդյունքները նույնպես նույնն են՝ բացառությամբ «հյուրընկալող կողմի տրամադրած տեղեկատվությունը» գործոնի (2018 թ.՝ 100%, 2019 թ.՝ 97,14%): Ենթակառուցվածքների վերաբերյալ համեմատության արդյունքները ցույց են տալիս «ինտերնետային կապի» հետ կապված բավարարվածության աճ՝ 71,11%-ից աճելով 100%-ի: Միջոցառման ընդհանուր գնահատականը, ինչպես նաև ՀՊՏՀ վերապատրաստումների շաբաթվան մասնակցությունը, գործընկերներին խորհուրդ տալը պահպանվել են միևնույն մակարդակում:

Օտար լեզվով դասավանդվող մասնագիտություններ

Համալսարանի միջազգային կապերի բաժնի կողմից 2012 թվականից ի վեր կազմակերպվում է օտարերկրյա քաղաքացիների կրթություն: Այս պահին ՀՊՏՀ-ն օտարերկրյա ուսանողների համար անգլերենով առաջարկում է մագիստրոսական «Գործարար կառավարում» և բակալավրական «Կառավարում» մասնագիտությունները: 2018 թվականի ընթացքում գերմանական BBW համալսարանի հետ ևս դիմում-հայտ է ներկայացվել Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությանը (DAAD), որը ֆինանսավորվել է 2019 թվականին և այժմ մշակվում է համատեղ ծրագիրը:

Համալսարանի որակի ապահովման և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժինների կողմից ևս համակարգվում են մեկական ծրագրեր օտար լեզվով:

Օտարերկրյա ուսանողներ

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում նոր ուսանողների ընդունելություն չի իրականացվել: ՀՊՏՀ-ում այս պահին օտարերկրյա քաղաքացիների համար

նախատեսված դասընթացներին մասնակցում են 2 օտարերկրյա քաղաքացիներ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրի շրջանակում:

Ընթացիկ տարվա ընթացքում բանակցություններ են կատարվում հնդկական «Բիլիմորիա Ըսոսիեյթ» կազմակերպության հետ՝ Հնդկաստանի Հանրապետությունից ուսանողների ներգրավման ուղղությամբ:

Դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ընդգրկված է մի շարք դրամաշնորհային ծրագրերում, որոնցից 3-ը համակարգում է միջազգային կապերի բաժինը.

Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Հայաստանում և Մոլդովայում (ՐԻՖԱՅՆ) REFINE

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 615,507.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 65,743.00:

eDrone

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 995,412.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 37,391.00:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ երիտասարդների ձեռներեցության համար

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 49,188.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 7,995.00:

Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Հայաստանում և Մոլդովայում (ՐԻՖԱՅՆ): REFINE ծրագրի շրջանակում մշակվել և բարեփոխվել է «Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը՝ համապատասխանեցնելով եվրոպական չափանիշներին: Ծրագրի շրջանակում երկշաբաթյա վերապատրաստման են մասնակցել ՀՊՏՀ 4 դասախոսներ, ևս 4-ի վերապատրաստումը նախատեսվում է հուլիսին: ՀՊՏՀ 4 դասախոս մասնակցել է առարկայական ծրագրերի մշակմանն ու բարեփոխմանը Ավստրիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում և Սլովակիայում, ևս 4-ը մասնակցելու են վերապատրաստումների նույն երկրներում 2020 թվականի հունվարին: Նշված մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա դասընթացը կազմակերպվելու է արդեն հաստատված նոր կրթական ծրագրով: Ծրագրի շրջանակում 2019 թվականի օգոստոսի ընթացքում ձեռք կբերվի գրականություն՝ 8000 եվրո ընդհանուր արժողությամբ:

eDrone ծրագրի շրջանակում ՀՊՏՀ 3 դասախոս Իտալիայի Սանիոյի համալսարանում մասնակցել է երկշաբաթյա վերապատրաստման: Հաշվի առնելով, որ ծրագրի արդյունքում ստեղծվող լաբորատորիան և կրթական ծրագիրը ներդրվելու են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, ՀՊՏՀ վերա-

պատրաստված դասախոսների կողմից նշված ծրագրում դասավանդման թեմաները մշակվել և ներկայացվել են վերջինիս համակարգողին կրթական ծրագրում ներառելու նպատակով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ երիտասարդների ձեռներեցության համար ծրագիրն ամփոփվել է 2019 թվականի մարտին: Ծրագրի շրջանակում ՀՊՏՀ 2 դասախոս ընթացիկ տարում մասնակցել են մեկ միջազգային գիտաժողովի Ռիգայի ՌԻԶԵԲԱ համալսարանում, ՀՊՏՀ-ում 2018 թվականի նոյեմբերին կազմակերպվել է միջազգային Ստարտ-ափ մրցույթ: Ծրագրի շրջանակում տպագրվել է և հրատարակման է ներկայացվել ուսումնական ձեռնարկ՝ «Բիզնեսի վարումը Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Լատվիայում, Մոլդովայում և Ուկրաինայում» վերնագրով:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Արտաքին կապերի դեպարտամենտի միջազգային կապերի բաժնի աշխատանքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել միջազգային կապերի բաժնին՝**

1) ընդլայնել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակման ծրագրերի աշխարհագրությունն ու գործընկեր բուհերի քանակը,
2) օտարերկրյա ուսանողների ներգրավման ուղղությամբ խորացնել համագործակցությունը արտերկրում ուսանողների ներգրավման գործակալությունների հետ,
3) շարունակել ընդլայնել միջբուհական համագործակցությունը,
4) աջակցել ամբիոններին՝ համատեղ կրթական ծրագրերի համար գործընկեր բուհեր և ֆինանսավորում հայթայթելու ուղղությամբ,
5) աջակցել համապատասխան ամբիոնների և ստորաբաժանումների ներգրավվածությանը՝ դրամաշնորհային նոր ծրագրերին դիմելու գործընթացում,
6) «Ամբերդ» հետազոտական կենտրոնի և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի հետ համատեղ մշակել և հայտադիմում ներկայացնել հետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին,
7) գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի հետ համագործակցությամբ պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում ապահովել միջազգային գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

3. Հանձնարարել մասնագիտական ամբիոններին՝

1) միջազգային կապերի բաժնի հետ համատեղ օտարերկրյա ուսանողների համար մշակել մագիստրոսական նոր ծրագրեր,
2) ակտիվորեն մասնակցել դրամաշնորհային ծրագրերի հայտերի ներկայացման գործընթացին՝ տարեկան ներկայացնելով առնվազն մեկ դիմում-հայտ,
3) աշխատել տեխնոլոգիական ուղղվածությամբ համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի մշակման, ֆոնդահայթայթման ուղղությամբ:

4. Հանձնարարել լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին, արտաքին կապերի դեպարտամենտի ստորաբաժանումներին՝

1) նկարահանել բուհի մասին պատմող եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տեսահոլովակ օտարալեզու հոլովակները օտարերկրյա դիմորդների շրջանում տարածելու նպատակով,
2) ապահովել համալսարանի մասին պատմող եռալեզու բուկլետի մշտական թարմացումը:

5. 2019 թվականի առաջնահերթ խնդիրներ համարել՝

1) ուսանողների փոխանակման ընդլայնումը,
2) դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակումը,
3) օտարերկրյա ուսանողների ներգրավումը,
4) միջազգային և տեղական դրամաշնորհային ծրագրերին ներկայացվող հայտադիմումների ավելացումը:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Պ.Վ.Ջանգուլյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. հունիսի 18
Երևան